ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

With funding from Austrian Development Cooperation

CARD

# ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԱՌՈՒՄ

## ԱՆԱՍՆԱՏԵՐԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է

- կենդանու ծնի դեպքում **7 օրվա** ընթացքում տեղեկացնել անասնաբույժ-մասնագետին,
- կենդանու շարժի (վաճառք, գնում, տեղափոխություն) պարագայում տեղեկացնել անասնաբույժ-մասնագետին,
- կենդանիների հարկադիր սպանդի կամ անկման դեպքում **անմիջապես** տեղեկացնել անասնաբույժ-մասնագետին և **7 օրվա** ընթացքում փոխանցել կենդանու ականջապիտակը,
- Գյուղատնտեսական կենդանիների՝ օրենքով թույլատրելի բակային մորթի դեպքում պահել մորթի ենթարկված կենդանու ականջապիտակը և **7 օրվա** ընթացքում փոխանցել անասնաբույժ-մասնագետին,
- Ականջապիտակի կորստի կամ վնասման դեպքում հայտնել անասնաբույժ-մասնագետին,
- Գյուղատնտեսական կենդանիների արտահանման դեպքում անասնաբույժ-մասնագետին տեղեկացնել **3 օրվա** ընթացքում:

## ԱՆԱՍՆԱԾՈՒԿԱՅԻ ԱՆԱՍՆԱԲՈՒՅԺ

- Անասնաշուկայի անասնաբույժը պարտավոր է գրանցել կենդանու մուտքը շուկա, վաճառքի դեպքում իրականացնել անասնատիրոջ փոփոխություն Համակարգում:

## ԱՆԱՍՆԱԲՈՒՅԺ ՄԱՍՆԱԳԵՏԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է

- կենդանու ծնի մասին տեղեկություն ստանալուց հետո **7 օրվա ընթացքում** իրականացնել կենդանու համարակալում և տվյալների **ներմուծում «ԱՆԻ ՊԱՍ»** էլեկտրոնային տեղեկատվական համակարգ (այսուհետ՝ Համակարգ): Գյուղատնտեսական Կենդանու անհատական համարն ամրագրվում է մեկ անգամ և ամբողջ կյանքի համար: Ականջապիտակներից մեկի կորստի դեպքում այն ենթակա է վերականգնման: Ականջապիտակը ենթակա է փոխարինման անընթեռնելի լինելու դեպքում:
- կենդանու վրա անհատական համարով ականջապիտակներն ամրացնելուց հետո **7 օրվա** ընթացքում համապատասխան թվային տեխնիկայի միջոցով տվյալները մուտքագրվում են Համակարգ: Համակարգ մուտքագրվող տվյալները պարունակում են առնվազն հետևյալ տեղեկությունները՝
  1. սեփականատիրոջ տվյալները (անուն, ազգանուն, հասցե, կոնտակտային տվյալներ),
  2. Գյուղատնտեսական կենդանու հաշվառման վայրը (մարզ, համայնք, հասցե).
  3. ամրագրված նույնականացման անհատական համարը (ականջապիտակի համարը).
  4. համարակալման ամսաթիվը,
  5. Գյուղատնտեսական կենդանու սեռահասակը (սեռ, ծննդյան ամսաթիվ).
  6. Գյուղատնտեսական կենդանու ցեղը (ցեղայնությունը՝ մաքրացեղ, խառնացեղ, տոհմային) և արտակազմվածքի նկարագիրը (գույն, այլ տարբերակիչ նշաններ), ծննի ամսաթիվը:
- Համակարգում իրականացնել տիրոջ փոփոխություն և/կամ կենդանու տեղափոխման վայրի հասցեի փոփոխություն: Տրամադրել Ձև N1 անասնաբուժական վկայական, որից հետո իրականացնել կենդանիների տեղափոխումը:
- Մորթի ենթարկված և անկած կենդանիների ականջապիտակների համարները **Համակարգից հեռացնել 7 օրվա ընթացքում:**
- Գյուղատնտեսական կենդանու տեղափոխման և ձեռքբերման տեղեկատվությունը ստանալու պարագայում Համակարգում իրականացնել **փոփոխություն** գործընթացի ավարտից հետո՝ **24 ժամվա** ընթացքում:

## ՍՊԱՆԴԱՆՈՑ

- Համաձայն սպանդանոցների կառավարման EMS-2 էլեկտրոնային համակարգի՝ Գյուղատնտեսական կենդանիների ականջապիտակների համարների ելքագրումը Համակարգից կատարվում է անմիջապես, քանի որ EMS-2 և ԱՆԻ ՊԱՍ համակարգերը գործում են միաժամանակ:
- Սպանդից հետո կենդանիների ականջապիտակները պարտավոր է **7 օրվա** ընթացքում հանձնել համայնքը սպասարկող անասնաբույժին:

## ԱՐԳԵԼՎՈՒՄ Է

- չհամարակալված գյուղատնտեսական կենդանու տեղաշարժը կամ տեղափոխումը,
- գյուղատնտեսական կենդանիների ականջապիտակների հանումը,
- չհամարակալված և (կամ) հակաանասնահամաճարակային տարեկան միջոցառումներում չներառված գյուղատնտեսական կենդանիների համար համայնքային արոտավայրերի և ջրելատեղերի օգտագործումը,
- գյուղատնտեսական կենդանիների տեղափոխումն արգելվում է առանց անասնաբուժական ուղեկցող փաստաթղթերի (անասնաբույժ-մասնագետի կողմից տրված Ձև1 անասնաբուժական վկայական):

Գյուղատնտեսական կենդանիների Համարակալման և հաշվառման համակարգի մասին մանրամասն տեղեկացիր **www.cas.am** կայքում